

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՔԻՄԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2023 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22-Ի ՆԻՍՏԻ ԹԻՎ 3
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Օրակարգում՝

- 1, Քիմիայի ֆակուլտետի կանոնակարգի քննարկում և հաստատում
- 2 Հայցորդների և ասպիրանտների գիտական թեմաների հաստատում
- 3, Ընթացիկ հարցեր

Քիմիայի ֆակուլտետի դեկան Ս. Վ. Ղոչիկյան

- Հարգելի գործընկերներ Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի 16 անդամներից ներկա են 16-ը: Այսօրվա աշխատանքային օրակարգը ուղղարկված էր բոլորիդ. ի՞նչ առաջարկներ ունեք:
- Որոշեցին հաստատել օրակարգը և անցնել քննարկման:

Պրոֆ. Ս. Վ. Ղոչիկյան,- Բոլորիդ ուղարկված էր ֆակուլտետի օրինակելի կանոնակարգը, որի հիման վրա պետք է մշակվի՝ քննարկվի և հաստատվի Քիմիայի ֆակուլտետի կանոնակարգը: Տեղյակ եք նաև, որ պայմանավորված ֆակուլտետի կանոնակարգի փոփոխությամբ իրականացվելու գիտական խորհրդի կազմի լուծարում և նոր գիտական խորհրդի կազմում: Հետևաբար ամբիոններում ոչ միայն քննարկել եք ֆակուլտետի նոր կանոնակարգը այլև հաստատել եք նոր գիտխորհրդի հրավիրյալ անդամների թեկնածությունները: Ինչ քննարկումներ եք արել ամբիոններում՝ ներկայացրեք առաջարկությունները կամ ուղղումները:

Ամբիոններում իրականացված քննարկումների արդյունքները ներկայացրեցին ամբիոնների վարիչները: Համակարգված ներկայացվում է ամբիոնների և ՈւԽ-ի առաջ քաշած հարցերը

Հարցերին պատասխանում է ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Ս. Վ. Ղոչիկյանը

- Կանոնակարգը իր բնույթով նման նախկին կանոնակարգին, սակայն կան որոշակի հարցեր և ուղղումներ
1. 36 կետին է վերաբերվում, որտեղ նշվում է ամբիոնի վարիչի ընտրության կարգը: Իմաստ ունի այս կետը ներառել, եթե ԵՊՀ կանոնադրության մեջ հստակ ներկայացվում է կարգը և պահանջները:

- Նիստի նախագահ Տ. Վ. Ղուկասյան,- Այո այդ կետը պետք է ներառվի քանի որ ֆակուլտետի կառուցվածքի մեջ ներառվում են ամբիոնները, իսկ ամբիոնի անբաժանելի մասն է ամբիոնի վարիչը: Այդտեղ բավականին հակիրճ ներկայացված են պայմանները:
 2. Ֆակուլտետի անվանակարգի անգլերեն օրինակում բացակայում է *the* հոդը որը պետք է ավելացվի
- Այդ նկատողությունը անպայման կներառվի ուղղումների մեջ
 3. Յուրաքանչյուր նոր կանոնակարգի քննարկումից հետո ընտրված անդամները՝ ամբիոնի վարիչներ, դեկան կարող են իրենց թեկնածությունը ևս երկու անգամ առաջարկեն այդ պաշտոնում, ճի՞շտ է արդյոք դա
- Այո ըստ կանոնակարգի հենց այդպես է, բայց չէ որ դա կատարվում է ընտրության ճանապարհով , ընտրությունը կատարում է գիտական խորհուրդը՝ հետևում է, որ ընտրությամբ կանցնի այն թեկնածուն ով արժանի է:
 4. Ֆակուլտետը պետք է ունենա առանձին գիտական խորհրդի կազմ, իսկ հետագոտական մասը՝ առանձի՞ն:
- Ոչ: Մենք ինստիտուտ չենք, մենք կենտրոն ենք , հետևաբար բոլոր հարցերը որոնք վերաբերվում են ֆակուլտետին՝ նաև գիտահետազոտական լաբորատորիաներին քննարկվելու են Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդում:
 5. Ամբիոններում կատարված գիտական խորհրդի հրավիրյալ անդամների ընտրությունները ունեն հետևյալ տեսքը
Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոն
Գ. Հ. Խաչատրյան և Գ. Ա. Շահինյան
Օրգանական քիմիայի ամբիոն
Ի. Լ. Ալեքսանյան և Մ. Ա. Սամվելյան
 5. Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի ընտրությունը, ինչ մասնաբաժիններով է ընտրվում
- Պետք է կանոնակարգի 17 և 18 կետերը միավորվեն, այս դեպքում պարզ կդառնա 50% անդամներ ընտրության ձևաչափը, այլապես կստացվի տասնորդական թվերով: 50%-ի 25%-ը ուսանողներ են և 25%-ը ընտրվի անդամներն են, ովքեր ընտրված են գիտական մասից: Գիտական խորհրդի անդամների 50%-ը ի պաշտոնե է: Ամբիոններում կատարված քննարկումների և ընտրության արդյունքում, ինչպես նաև ՈւԽ-ում կատարված ընտրության արդյունքում ունենք հետևյալ տեսքը:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՔԻՄԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ Ի ՊԱՇՏՈՆԵ ԱՆԴԱՄՆԵՐ

1. Ղուչիկյան Տ. Վ. - ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի դեկան, ք. գ. դ., պրոֆեսոր, խորհրդի նախագահ
2. Գալստյան Ա. Ս. - ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի դեկանի տեղակալ, քիմիայի ֆակուլտետի «Քիմիական հետազոտություններ կենտրոնի»-ի ավագ գիտ. աշխատող ք. գ. թ., դոցենտ
3. Դուրգարյան Ն. Ա. - ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ, ք. գ. դ., պրոֆեսոր
4. Մարգարյան Շ. Ա. - ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ, ք. գ. դ., պրոֆեսոր
5. Մարտիրյան Ա. Ի. - ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի անօրգանական և անալիտի քիմիայի ամբիոնի վարիչ, ք. գ. թ., դոցենտ
6. Կ. Ռ. Գրիգորյան - ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի մեթոդական խորհրդի նախագահ, ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի պրոֆեսոր, ք. գ. դ.
7. Ռ. Պ. Մխիթարյան - ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի արհեստակցական կազմակերպության նախագահ, անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի դոցենտ ք. գ. թ.
8. Մ. Ա. Սամվելյան - ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի «Քիմիական հետազոտություններ կենտրոնի»-ի ավագ գիտ. աշխատող ք. գ. թ., դոցենտ խորհրդի քարտուղար

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ

9. Ալեքսանյան Ի. Լ. - ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի «Քիմիական հետազոտություններ կենտրոնի»-ի ավագ գիտ. աշխատող ք. գ. թ.
 10. Խաչատրյան Հ. Գ. - ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի «Քիմիական հետազոտություններ կենտրոնի»-ի գիտ. աշխատող ք. գ. դ., պրոֆեսոր
 11. Գաբրիելյան Լ. Ս. - ԵՊՀ Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի դոցենտ, ք. գ. թ., «Քիմիա» կրթական ծրագրի ղեկավար
- Գ. Ա. Շահինյան - ԵՊՀ անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի դասախոս, ք. գ. թ.

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՎԻ ՍՈՎՈՐՈՂ ԱՆԴԱՄՆԵՐ

1. Նիգարյան Ա. Ա. – ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի սննդի անվտանգություն բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող, ֆակուլտետի ՈւՄ նախագահ,
2. Բաղանյան Է. Ա. – ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի սննդի անվտանգություն բաժնի բակալավրիատի 4-կուրսի ուսանող
3. Երիցյան Է. Ա. – ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի սննդի անվտանգություն բաժնի բակալավրիատի 2-կուրսի ուսանող
4. Հովհաննիսյան Հ. Ա. – ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի սննդի անվտանգություն բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող, 2. Նիստի նախագահ – Տ. Վ. Ղոչիկյան

-Օրակարգի երկրորդ հարցը ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների գիտական թեմաների և ղեկավարների հաստատման հարցն է: Այժմ ֆակուլտետում ունենք նոր ընդունված 1- ասպիրանտ և 1- հայցորդ: Երկու թեկնածուներն էլ անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբոնից են: Ամբիոնում քննարկվել և հաստատվել է ասպիրանտ Վ. Վ. Վարդապետյանի և հայցորդ Մ. Ս. Հայրապետյանի գիտական թեմաների և գիտական ղեկավարների հարցը:

Լսեցին –Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբոնի ասպիրանտ Վլադիմիր Վահանի Վարդապետյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման մասին:

Ելույթ ունեցան - Քիմիայի ֆակուլտետի ղեկան Տ.Ղոչիկյանը հաղորդեց, որ Վլադիմիր Վարդապետյանը ավարտել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը , այժմ աշխատում է Քիմիայի ֆակուլտետում գործող բազային լաբորատորիայում (կրտսեր գիտաշխատող): Ամբիոնը քննարկել է նրա ատենախոսության թեմայի հարցը և առաջարկում է հաստատել “Բուսահումքից կենսաբանորեն ակտիվ որոշ միացությունների լուծահանում և դրանց հատկությունների ուսումնասիրում” թեման Բ.00.01 «Անօրգանական քիմիա» մասնագիտությամբ, իսկ գիտական ղեկավար քիմ. գիտ. թեկնածու, Արմեն Իգնատիոսի Մարտիրյանին:

Որոշեցին – Ասպիրանտ Վլադիմիր Վահանի Վարդապետյանի թեկնածուական ատենախոսության գիտական թեման հաստատել «Բուսահումքից կենսաբանորեն ակտիվ որոշ միացությունների լուծահանում և դրանց հատկությունների ուսումնասիրում» թեման Բ.00.01 ծածկագրով

«Անօրգանական քիմիա» մասնագիտությամբ, իսկ գիտական ղեկավար քիմ. գիտ. թեկնածու, Արմեն Իգնատիոսի Մարտիրոսյանին:

Լսեցին – Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի հայցորդ Մարտին Սերգեյի Հայրապետյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման մասին:

Ելույթ ունեցան - Քիմիայի ֆակուլտետի ղեկան Տ.Ղուչիկյանը հաղորդեց, որ Մարտին Հայրապետյանի ատենախոսության թեման ամբիոնը քննարկել է և առաջարկել է հաստատել «Էկոլոգիապես մաքուր նյութերի հիման վրա կոմպոզիտային սորբենտներ՝ քրոմատագրաֆիական անալիզում նմուշապատրաստման համար» թեման Բ.00.01 «Անօրգանական քիմիա» մասնագիտությամբ, իսկ գիտական ղեկավար քիմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Համբարձում Գուրգենի Խաչատրյանին:

Որոշեցին – Հայցորդ Մարտին Սերգեյի Հայրապետյանի թեկնածուական ատենախոսության գիտական թեման հաստատել « Էկոլոգիապես մաքուր նյութերի հիման վրա կոմպոզիտային սորբենտներ՝ քրոմատագրաֆիական անալիզում նմուշապատրաստման համար» թեման Բ.00.01 «Անօրգանական քիմիա» մասնագիտությամբ, իսկ գիտական ղեկավար քիմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Համբարձում Գուրգենի Խաչատրյանին

3. Ընթացիկ հարցեր

Մ. Ա. Սամվելյան – Հարգելի գործընկերներ քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի 2023/2024 ուս. տարվա աշխատանքային ծրագիրը կուղարկեմ Ձեր էլեկտրոնային հասցեին կազմի հաստատումից հետո:

Նիստի նախագահ,

ղեկան, պրոֆեսոր
Տ. Վ. Ղուչիկյան

Նիստի քարտուղար

դոցենտ
Մ. Ա. Սամվելյան